# ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳԻՐԸ

**Երեւան, 20 օգոստոսի, 2021 թ.**

Ամենայն Հայոց Կաթողիկոս
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

*Վեհափա՛ռ Տեր,*

*Ձեր ծննդյան օրվա նախօրեին Ձեզ եմ հղում առողջության ու արեւշատության իմ ջերմ բարեմաղթանքները։*

*Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եղել եւ մնում է մեր ազգային ինքնության կարեւորագույն հիմնասյուներից մեկը, մեզ միավորող առանցքը, մեր հավատքի, պատմության ու ավանդույթների շարունակական ներկայությունն ապահովողը մեր արժեհամակարգում, մեր մշակույթում, մեր ներաշխարհում։*

*Ձեր հայրապետության շուրջ 22 տարիների ընթացքում մեր եկեղեցական կյանքն աշխուժություն է ապրում անցյալի արժեւորմամբ, ներկայիս գործունեությամբ եւ ապագայի տեսլականով։ Անցնող 22 տարիները Հայ Եկեղեցու համար եղել են զորացման, բարեփոխման, եկեղեցաշինության տարիներ։ Այդ ընթացքում ձեռնարկվել են քայլեր՝ միտված Հայ Եկեղեցու առաքելությունն առավել արդյունավետ դարձնելուն եւ եկեղեցական կյանքը կանոնակարգելուն։*

*Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր գահակալության հատկապես այս վերջին տարիները համընկնում են մի ժամանակահատվածի, երբ մեր երկիրն ու ժողովուրդը անցնում են բազում դժվարությունների ու փորձությունների միջով։*

*Ցանկացած դժվարին իրավիճակ հաղթահարելու մեկ ճանապարհ կա՝ միասնությունը։ Ներկայիս արագ փոփոխվող աշխարհում մարդկությունն ի թիվս այլ ճգնաժամերի, նաեւ ինքնության ճգնաժամ է ապրում։ Առկա մարտահրավերներն ու խնդիրներն առավել քան կարեւոր են դարձնում համախմբումը հոգեւոր եւ բարոյական արժեքների շուրջ, որոնք մնայուն են նաեւ մեր Եկեղեցու շնորհիվ։*

*Մեր ժողովուրդը կարիք ունի հույսի, հավատի եւ վստահության, կարիք ունի բարոյական մաքրության, համերաշխ ու միասնական կեցության, փոխադարձ հարգանքի եւ հանդուրժողականության, կարիք ունի վերածննդի ու վերարժեւորման։ Գնահատելի է, որ մխիթարության, ոգեւորումի եւ աջակցության խոսքերի հետ մեկտեղ, որպես հայրենասիրության յուրատեսակ դաս, այս մասին հնչեցվում է նաեւ Վեհափառի կողմից։*

*Թող Ձեր հայրապետական հոգածությունն այսուհետ եւս աջակից եւ սատար լինի մեր երկրին ու ժողովրդին՝ ի շահ մեր Հայրենիքի եւ աշխարհասփյուռ հայության, ժողովուրդ—պետություն—եկեղեցի փոխհարաբերությունների ամրապնդման։*

*Մաղթում եմ Ձեզ հոգու ամրություն եւ ամենայն բարիք։*

*Խորին հարգանքով՝*

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ նախագահ